17. ԽԱՋ ԱԽՉԻԿ

Կէղնի, չէղնի բազըրկանըմ կէղնի։ Կելնի կէրթա թուճրութենի։ Կիգա անվերի սարու մը գլուխ, զուր բեռներ կթափե։ Գիշեր ձենըմ կլսե, որ կասե. «Հավա՜ր, մատաթ, հավա՜ր, մատաթ»։

Իրեկ հեղ լե ունկաճ կտնե, կիշքե որ կբոռա էդ ձեն՝ հավա՜ր. մատա՜թ։

Կելնի զուր մշկներ կճամբե, կասե.—Գացե՜ք, տեսեք էդ ի՞նչ ձեն է։

Կէրթան տեսնան որ մեշի մեջ կնիկըմ ցավ կանուկ է, նը մարթ, նը մատաթ։

Կդառնան հ՚իգան, կասին.— Գացինք, ի՞նչ տեսնանք աղեկ է. տեսանք որ կնիկըմ ցավ կանուկ է, վիսա կբոռա՝ հավա՜ր, մատա՜թ։ Նր մարթ կա ու նը մատաթ։

Կճամբե զմշկըներ քաղաք, կասե.— Գացեք, կնիկըմ առեք ու էկեք. թըղ հ՚իգա էղնի ղայեկ։

Մշկներ կէրթան, կառնեն կնիկըմ ու կիգան։ Կէղնի դայեկ։ Կնիկ կպառկի, բերե տղե մը։ Բազըրկան լե յոթն օր կմնա էդ տեխ։ Կբերե տերտեր, կիտա զտղեն կնքել, կէղնի քավոր, հարիր քիսա լե փարա կիտա ու կասե կնկան.—Էդա իմ մըհոր թըղ մնա քու մոտ. հ՚եբ որ ձըր փարեն խըլըսավ, կիտաս քու տղի ձեռք, հ՚իգա ղիս գտնա, առնե փարա ու հ՚իգա։

Բազըրկան կասե ու կթողե կէրթա։ Տղեն է, կմեծնա, կէղնի կարդալու։ Մեր կճամբե, բերե վարժապետըմ, կիտա կարդացնել։

Կկարդա, հար տըսնուհինգ տարեկան կէղնի, փարեն կխըլըսի։ Օր կխըլըսի, կէլնի մեր, կբերե զբազըրկնի մըհոր, կիտա տղին։

Կասե.— Տղա, ֆլան վախտ որ ես քզիկ ցավ կաներ ենք, էդա տեխ բազըրկանըմ էկավ։ Բերեց կնիկըմ, էղավ ընծիկ ղայեկ։ Յոթ օր ըե մնաց, տերտերըմ բերեց, տվեց զքզիկ կընքել, ինք լե էղավ քավոր ու թողեց գնաց։ Հ՚եբ որ հ՚ելավ կէրթեր, ընծիկ հարիր քիսա փարա տվեց ու գէդա

մրհոր։ Ասեց. «Հ՝եր օր ձրր փարեն խրլրսավ, կիտաս զէդա մրհոր քու տղի ձեռք, հ իգա ղիս գտնա, առնե փարա ու հ՝իգա»։ Լաո, փարեն խրլրսեր է. հրմկա հ՝ելի, առ զէդ մրհորն ու գնա, բալքեմ գտնաս զէդ բազրրկան, առնես քիչրմ փարա, հ՝իգաս մրզիկ։

Տղեն է, առավ զմրհորն, թալեց տոպրրկի մեջ, շալկեց ու հ՝ընկավ ճամբաի, գնաց։

Գնաց, շատ գնաց, քիչ գնաց, գնաց բաղրրկնի քաղաք. հ՝ելավ դուրս։

Բլե բազրրկան մշկներուն թանպիհ էրեր էր օր. «Իմ մրհոր կորեր է, վիր մոտ կտեսնաք, բրռնեք, առեք ու էկեք իմ մոտ»։

Մշկներն է, օրրմ շուկի մեջ կոլրրտեն, տեսան օր տղե մը թալեր է տուգրակրմ ուր փեճ, մրհորրմ լե առեր է ուր ձեռք ու կոլրրտի։

Կիշքեն, կտեսնան օր ուրանց աղի մրհորն է։

Կասեն.— Տղա՜, էդ ի՞նչ մրհոր է, թալեր ես քու թեն ու կոլրրտիս։

Տղեն կասե.— Մրհոր է։

Մշկներ կասեն.— Էդ մրր աղի մրհորն է։

Կառնեն ձեռքեն, կառնեն կիգան ուրանց բաղրրկնին։

Կասեն.—Աղա, ֆլան տղի ձեռք տեսանք զքու մրհոր, առանք ու էկանք։

Բազրրկան կասե.— Շատ աղեկ, ես ձրզիկ թանպիհ էրի, օր զմարդ լե բերեք ձրր հետ, զմարդն հ՝որի՞ չբերիք։

Գացին մշկներ, առան զտղեն ու էկան։

Առան զտղեն ու էկան։

Բազրրկան ասեց.—Առեք գացեք բաղնեկ, լողկրցուցեք ու բերեք։

Տարան լողկրցուցին ու առան էկան։ Օր առան էկան, բերեց ձեռքրմ աղեկ հալավ հագուց ու բերեց հ՝ընցուց ուր շապկի ու ուր կնկա շապկի փողպատով, էրին ուրանց հոգու զավակ։

Տղեն մնաց բազրրկնի տուն ու էղավ բաղրրկնին տղա։

Բազրրկան է, քանի մը տարուց սորա հ՝ելավ գնաց բազրրկնուԹենի։

Էդ բազրրկնին լե քառսուն հ՝օդա կեր, հ՝օդեսներու բալնիկներ լե ուր մոտն էր։ Հ՝եր հ՝ելավ կէրԹեր ԹուճրուԹենի, բերեց զէդ հ՝օդեսներու բալնրկներ զեռսուն ու ին թասլիմ էրեց տղեն, մեկն էլ տվեց ուր կընկա մոտ։

Ասեց՝ լիտաք տղեն։ Տվեց ու թողեց գնաց։

Բաղրրկան օր թողեց գնաց, տղեն հ՝ելավ առավ զբալնրկներ ու հ՝ընկավ հ՝օդեք, զմեն հ՝օդեք թամաշա էրեց։

Էկավ տեսավ օր հ՝օդի մը դուռ փակուկ էր ու բալնիկ չկեր վրեն։

Դառցավ գնաց, մոր ասեց.— Ֆլան հ՝օդի բալնիկ չկա, հ՝ու՞ր է։

Մերն ասեց.— Զրմ գինա, ես խաբար չունեմ։

Տղեն ասեց.— Վալայի, քենե կհ՝ուղիմ, չի տաս, կթողիմ քու տնեն կէրթամ։

Մոր ճար կտրավ, հանեց զրալնիկ, տվեց։

Առավ զրալնիկ ու գնաց հ՝օդի դուռ բացեց, տեսավ օր էդ տեխ պատվերկըմ կա կախուկ պատից, ուտիս չուտիս, հըմա թամաշա էնիս։

Մեկ լե իշքեց, տեսավ օր էն դին վարդըմ կա հ՝օդի մեջ տընկուկ ու բլբուլ կանուկ է վըր հ՝օդի պըռկեն ու կկանչե։

Իմալ էղավ, զթեեր զարկեց հ՝իրար, փրցավ, վարդի թուփըմ հ՝ընկավ գետին։ Օր հ՝ընկավ գետին, բլբուլն ուր սըրտի քրպեն վերուց զինք ու զարկեց վարդի հ՝ետեն, էղավ հազար կտոր։

Զէդ օր տեսավ տղեն, ասեց.— Բլբուլըմ վարդի թուփ հ՝ապով կմեռնի՞, ես իմա՞լ էդա ախչիկ հ՝ապով չմեռնեմ։ Իմ օր կա, էդ է, չկա՝ էդ է։

Զհ՝օդի դուռ փակեց ու հ՝ելավ էկավ մոր մոտ։ Ասեց.— Վալայի, ես կէրթամ էդ ախչկա հ՝ետև։

Ինչ էրեց մեր, վրեն չկառցավ։

Ասեց.—Տղա լաո, կանի քու հեր թող հ՝իգա, սորա գնա։

— Զէ՛, ես չըմ կանի, իլայի հըմկա կէրթամ։

Հ՝ելավ քառսուն բեռ օսկի ու արծաթ բառցավ, չկա՞ բազըրկնի տուն օսկի ու արծաթ, էձգեց հ՝առեջ ու գնաց։

Գնաց, շատ գնաց, քիչ գնաց, գնաց էդ ախչկա քաղաք հ՝ելավ դուրս։

Խանի մը մեջ թափեց զուր բեռներն ու նստավ։

Էդ ախչկա հերն էր, կռահեց օր էդ տղեն ուր ախչիկ հ՝ապով է էկի։ Հ՝ելավ գնաց զտղեն գտավ։ Նստան ժըղլան հ՝իրարու հետ։

Տղեն ասեց.— Ես քու ախչիկ հ՝ապով իմ էկի։

Զունքլի մարդն հասկըցուց, օր ինք ախչկա հերն է։

Բահս բռնին ախչկա հերն ու տղեն հ՝իրարու հետ։

Ախչկա հերն ասեց.— Հայդե, քզիկ իզին, իմ տուն հանտե քու հ՝առեջ, գնա օլըրտի, օր զիմ ախչիկ գտար, հալալ էղնի քզիկ, քառսուն բեռ օսկի լե ես կիտամ քզիկ, առ ու գնա։ Օր չգտար, քու քառսուն բեռ ապրանքն էղնի ընծիկ։

Տղեն է, իրեք օր կզարկե-կզարկվի, չկանա զախչիկ գտնա։ Կիտա կքառսուն բեռ օսկին, կհ՝ելնի տուք ու ըռուք, տառնա հ՝իգա բազըրկնի տուն։

Քառսուն բեռ լե կբառնա կէրթա։

Ախչկա հեր մեկ լե կլսե օր տղեն տառցեր է, էկի։ Կէրթա կասե.— Էկո մեկ լե բահս բռնեք օր զիմ ախչիկ գտար՝ հալալ էղնի քզիկ, կիտամ զքու քառսուն բեռ մալն, քառսուն լե ես տնեմ վրեն, առ ու գնա։ Օր չգտար՝ թող զքու քառսուն բեռն ու գնա։

Տղեն մեկ ըն իրեք օր կզարկե-զարկվի, հար ական ծակ ըե կիշքե. չկոնա գտնա, տուց ու բռուց կթողե, հ՛իգա։

Ինչ գլխու ցավանք էնեք, զբազըրկնի ական շոր ըե կծախե, առնէ զփարեն ու էրթա։

Կէրթա ախչկա հոր քաղաք, կհ՛ելնի դուրս։

Ախչկա հեր կլսե, կիգա բարև կիտա։

Բարև չառնե։

Կնստի ու կֆքըրի. «Ինչ ընեմ, ինչ չէնեմ օր զէդ ախչիկ ձեռք բերեմ»։ Կհելնի էդ քաղքի սանյատճիներում տավաթ կէնե։ Տավաթ կէնե, կբերե խմցու, կթողեն կէրթան, բան չըն հարցու։

Իրեք հեղ ըե կբերե, բան չըն հարցուցնե, թե հ՛որի՞ն զմզիկ կբերես ու տանես։

Օրըմ ըե օսկերիչներուն կիտա, տավաթ բերե, կուտեն, կխմեն, կհ՛ելնեն էրթան։ Օր կհ՛ելնեն էրթան, օսկերիչըմ էն դիհեն կթոնի, կասե.— Ախբըրտանք, կանեք, մ՛էրթաք, հալբաթ էտա մարդուն դարդըմ կա, օր զմզիկ կտանե, բերե։ Կանեք հարցունք, տեսնանք ի՞նչ է։

Կհարցու, կասե.—Ախբեր, քու դարդն ի՞նչ է օր, էդա հ՛էլավ քանի հեղ կբերես մըր քաղքի սանյաթքարներ ու կտանես։

Մարդն կասե.— Ալ ու քեֆյաթն էդա հըմլա է. էդա տեխ խորոտիկ ախչիկըմ կա, ես տեսա զպատվերքն, հ՛ելա էկա, օր առնեք։ Բահս բռնի ախչկա հոր հետ, ախչկա հեր վըր ախչկան, ես ըե՝ վըր իմ էղածին ու չէ-ղածին օր փնտռենք զախչիկն ու առնեք էրթենք։ Շ՛ուր օր փնտռեցի չկառ-ցա գտա, հըմկա էկեր եմ, մեկ ըե էդոր հ՛ապով։ Իմ հետ մեկ բեռ օսկի կա, մեկ ըե արծաթ, վոր կառնա հըմալ բան շինե, օր ես մտնեմ մեջ ու չէրևամ։

Էդ ուստեն կասե.— Հասավ հ՛իս։

Կիգա կառնե զմեկ բեռ օսկին ու արծաթ, կէրթա կշինե խաբլամե մը ու ղտղեն կդնե մեջ։

Տղեն կասե.—Ուստա, ինչ օր կիգա քզիկ, խաբլամեն ըե քզիկ, մե-նակ հըմալ էրե, օր ես հասնեմ իմ սրտի մուրազին։

Օսկերիչն է, կշինե զխաբլամեն, կբերե զտղեն մտու մեջ, կառնե ու հ՛ընկնի թաղեր, ինք կխփե, տղեն կխաղա, բըլե մարդ չգինա։

Ախչկա հեր կիգա, կտեսնա, կասե. «Աղեկ է, տանեմ իմ ախչկա խեչ, քիշըմ թըղ խաղա, բացվի սիրտ»։

Կիգա կասե.— Ուստա, ուստա, տուր տանեմ զէդ սազ, քիշըմ իմ ախչիկ թամաշա էնե։

Ուստեն կասե.— Վալայի, չըմ իտա, կտանես, էլ չբերես, յամ կկոտրես։

Մարդն կասե.— Ախբեր, դու իմա՞լ մարդ ես, առ քու սազի գին, օր կոտրավ՝ էլ մի տա զիմ փարեն։

Կհանե թե հարիր, թե էրկու հարիր օսկի կիտա օսկերիչու մոտ, կառնե զսազն ու կէրթա։

Օսկերիչն բըլե հ՝առջին հեզ սորվեցուցեր էր, ասեր էր տղին.— Տղա, զաչքդ աղեկ բաց, տես զքզիկ հ՝ուրվե՞ր կտանե, հ՝ուրվե՞ր կբերե. օր սորվիս, էրթաս ախչկա խեչ ու հ՝իգաս։

Ախչկա հերն է, կառնե զսազն ու կէրթա։ Կէրթա, բանա հ՝օդիմ դուռ. հառքեն կհ՝իջու վարոցըմ, կզարկե գետին, գափանքըմ կբացվի, կհ՝եջնի ցած։

Օսկեբիչ տարզըմ թողեր էր։

Տղեն կիշքի օր, ախչիկ նստուկ է էդ տեխ, քըրկեն հ՝առեջ ու նըխշ կէնե, իրեք խազ լե կէրթան մեջ հ՝օդեն ու կիգան։

Հերն կասե.— Ախչի լաո, առ քզիկ սազ, օր սիրտդ չնեղանա, ծափե, ինքն ուրեն կխաղա, թամաշա էրե։

Ախչիկն կծափե, կիշքե օր, սազ հ՝ելավ օտք ու կխաղա։ Ինքն ուրեն կասե. «Էհվալա շինողին, օղորդ օր մարիֆաթ է, բլե հոգվոր կա էդոր մեջ»։

Հեր թողեց գնաց։

Գիշեր օր էղավ, ախչիկն էկավ սազի հ՝առեջ, ասեց.—Տղա՛, ես գինամ, դու հոգվոր ես, մտուկ ես էդա խաբլամի մեջ ու հ՝իս հ՝ապով իս էկի, ուխտ կէնեմ՝ դու ընծիկ, ես քզիկ, բաց զդուռ ու հ՝ելի դուրս։

Օր ուխտ կենե, տղեն կբանա զդուռ, հ՝ելնի դուրս։

Գիշեր կուտեն, կխմեն, կգրկվեն հ՝իբար, պառկեն զուրանց քեֆ կենեն։ Օր կլուսնա, կհ՝ելնեն քնուց, կհաղնեն զուրանց հալավ։

Ախչիկն կասե.—Կէրթաս կդառնաս հ՝իգաս, ճամբախ սորվար, վարոց լե զարկուկ է հ՝առեք, կհ՝իջուս, կզարկես վըր տախտին, դուռըմ կբացվի՝ կհ՝եջնիս, հ՝իգաս իմ խեչ։ Օր դուռ բացվավ, ինք (հեր)· քենե շուտ կհ՝իջնի, կիշքես՝ զէդա վարոց կվերցու, կզարկե ընծիկ, ես կէղնեմ խազ, խառվեմ խազերու մեջ, բըլե ես կչոկվեմ մեկդին։ Հանդե իմ հեր կասե. «Վերու քզիկ, որ մեկ կվերուս, վերուս»։ Դու զէն խազ վերու, օր թաք կանուկ է խազերուց հեռուն, էնի ես եմ։

Կվերցու զտղեն, գնե խաֆասի մեջ, լուսուն կիգա հեր, կառնե էրթա։ Կտանե իտա օսկերիչն։

Տղեն օր կիգա, կհ՝ելնի խաֆասի մեջեն, զինք աղեկըմ տուզմիշ կենե, կէրթա ուր խան նստե։ Էն տեխ օր հ՝առջին հեզ կիզեր։

Ախչկա հեր կլսե, օր տղեն մեկ լե ուր ախչիկ հ՝ապով էկեր է։ Կհ՝ելնի կէրթա, բարև կիտա, կառնե զբարև ու տեխ կիտա, կնստե։

Կնստի, փելըմ հ՝իրարու հետ կժղլեն։

Տղեն կասե մարդուն.— Ձքու ախչիկ չըս իտա՞ ընծիկ։

Մարդն կասե.— Հ՚որի՞ չըմ իտա, կիտամ, քելե էրթանք օլըրտի, գտար՝ թրդ էդնի բդիկ։

Կառնե գտղեն, կէրթա։

Էրկու օր ու կես կօլըրտի, օր ախչկա հեր ֆարղին չէրթա, զախչիկ չգտնա։

Կմնա էդ կեսօր, կէրթա բանա զախչկա հ՚օդի դուռ, զվարոց կհ՚իջու առնե դա, կղարկե վըր տախտեն, դուռ կբացվի։

Օր կբացվի, կասե՝ գտար։

Կասե՝ գտար ու ինք հ՚առեջ կհ՚իջնի, կքաշե զվարոց, զարկե ախչկան։

Կասե.— Դը վերցու հատըմ բզիկ։

Ախչիկ խազերուց կջոկվի, կանի մեկ դին։

Տղէն կասե.— Ես զէդա խաղ կվերցում։

Օր կասե, ախչկա հեր տեզպրտեդ կպատռի։

Կհ՚ելնի առնե զախչիկն ու բառնա զախչկա ունեցած ու չունեցած ու հ՚ընկնի ճամբախ։

Մենք հըմկա դառնանք վըր բաղբրկնին։ Բազբրկան է, կհ՚ընկնի նեղ հալու մեջ, նե կհ՚ելնի էրթա դիմե ուր ախբըրտոց, ախբըրտանք լե հալով կէդնեն։ Կասե.—Ձիմ ձեռք բռնեք։

Ախբըրտանք կասեն.— Էն վախտ օր քու հալ ու հալբաթ աղեկ էր, մըր հալ աղեկ չէր, դու հ՚որի՞ չիգեիր։ Հ՚ելար բեի մը օղուրին զըմեն խարճ էրիր, հըմկա լե թըղ հ՚իգա, աղատե զբզիկ։

Կլալուճկվի, չլալուճկվի, բան չըն իտա։ Սորա հ՚երես շատ կտնե, բառսուն օսկի կիտան, խավլ քառսուն օր կդնեն, օր չիտա՝ օրական քառսուն դրամ միս կտրեն հ՚ուրնե։

Տղեն է, կդառնա, հ՚իգա ուր հոր քաղաք, կէղնի թագավոր։

Քառսուն օր կթմի, ախբըրտանք կիգան, զուրանց փարեք կուզեն։

Մարդն կասե.— Ձունիմ, հանդեմ կանուկ ձըր հ՚առեջ, ինչ գինաք՝ էրեք։ Կուզեք օրական քառսուն դրամ միս փրցուցեք, կուզեք ազատ թողեք։

Խսաքրմ ընդորնե, մեկ ընգորնե։ Կհե՚լնեն էրթան, կասեն.—Մզիկ թաժա թագավոր է նստի, էրթանք մոտ գանգատ էնեք։

Կհ՚ելնեն կէրթան։

Թագավորն է կասե.—Ախբըրտանք, ձըր գանգատն ի՞նչ է։

Կվերցուն էրկու ախբեր կասեն.— Էդա մըր ախբերն է, թավաթուր հարստութենի տեր էր, էն վախտ լե մզիկ հալ չկեր, կէրթենք հ՚ուրնե փարա հ՚ուզենք՝ չիտեր։ Հ՚ելավ բոզու մը տղա բերեց պահեց, զըմեն կերավ խըլըսավ, ինք լե հ՚ընկավ աղքրտութենի մեջ։ Էկավ մենե քառսուն

օսկի հ՝ուզեց, քառսուն օր ժամանակով, օր չի տա՝ օրական քառսուն դրամ միս պիտի կտրենք հ՝ուրնեւ Հ՝էսօր քառսուն օր թմավ, զմբր փարեն չիտա, հրմկա մենք լե բերեր ենք քու խեշ, յամ զմբր փարեն կիտա, յամ օրական քառսուն դրամ միս կկտրենք հ՝ուրնե։

Թագավորն կասե.— Մարդ քառսուն օսկի հապով ուր ախբորնե քառսուն դրամ միս օրական իմա՞լ կտրե, իմա՞լ խիղճ ու մարամուք է, չէ օր կկտրեք՝ կմեռնի։

Ախբբրտանք կասեն.— Իմա՞լ էնեք, ախբր մենք հրմալ ինք խոսի հ՝իրարու հետ, ըպա էն վախտ օր ուրեն կեր, հ՝որի՞ չիտեր մզիկ, մենք լե աղեկ կէնենք։

Օր հրմալ ասին, մեկ-մեկ ճըլոթ տվեց ամեքուն, տվեց զուրանց քառսուն օսկին ու էրեց դուրս։ Դառցավ բաղբրկնին ասեց.— Ես էն տղեն իմ օր դու բերիր պահիր։

Նոր բերեց համամլամիշ էրեց, հագուց ձեռքըմ հալավ, էրեց ուրեն հեր, ինք էղավ տղա։

Աստծուց հ՝իջավ իրեք խնձոր, մեկ՝ ասողին, մեկ՝ լսողին, մեկ լե՝ անկաճ էնողին։